



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 15 » դեկտեմբեր 2023թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ No. 1003-շ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԶԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Հայկ Գվարդիկի Մաղաքեյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն 1997 թվականի դեկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին» համաձայնագրի 27-րդ հոդվածի /Աջակցություն գանձման գործում/ 1-ին կետի «Պայմանավորվող պետության իրավասու մարմնի/հետագայում հիշատակվող որպես Հայցատեր պետություն/ հայցով մյուս Պայմանավորվող պետությունը /այսուհետ՝ Հայցվող պետություն/ հաշվի առնելով 7-րդ, 9-րդ և 10-րդ կետերի դրույթները, դիմում է անհրաժեշտ քայլերի առաջին Պետության հարկային պարտքերի գանձմանը այնպես, ինչպես որ կվարվեր իր սեփական հարկային պարտքերի դեպքում: Պայմանավորված է, որ «հարկային պարտքեր» արտահայտությունը նշանակում է հարկի ցանկացած գումար, ինչպես նաև նրա տոկոսները, նրա հետ կապված տուգանքները կամ տույժերը և այդ գանձմանը բնորոշ ծախսերը, որոնք ենթակա են վճարման, բայց դեռևս չեն վճարվել: Նույն հոդված 2-րդ կետի համաձայն՝ նշված դրույթները կիրառվում են միայն այն հարկային պարտքերի նկատմամբ, որոնք ներկայացված են Հայցատեր պետությունում դրանց գանձումը թույլատրող փաստաթղթի միջոցով և, եթե իրավասու մարմինները չեն համաձայնել այլ կերպ, չեն վիճարկել:

Համաձայն վերը նշված համաձայնագրի Ֆրանսիայի իրավասու մարմինը ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է հայց՝ ՀՀ քաղաքացի Հայկ Մաղաքեյանի Ֆրանսիայի պետական բյուջեի նկատմամբ չկատարած հարկային պարտավորությունները գանձելու և Ֆրանսիայի պետական բյուջե փոխանցելու նպատակով:

Համաձայն «Ֆրանսիայի Հանրապետության պետական ֆինանսների ծառայության գանձապետարանի հատուկ պահանջների տնօրինության B314A05 2 81743 15/05/2018 00024 վճարման ծանուցման» ֆիզիկական անձ Հայկ Գվարդիկի Մաղաքեյանի /Անձնագիր՝ BA2555554 07.03.2016թ. 099-ի կողմից. ՀԾՀ՝ 2401710515, Հասցե՝ Երևան, Կենտրոն թաղ., Սայաթ-Նովայի փ. 19-3, Սյունիքի մարզ ք. Կապան Մ. Ստեփանյան 4-7/ Ընդհանուր հարկային օրենսգրքի 1730-1 հոդվածով նախատեսված ընդհանուր պահանջվող գումարը /չկատարված պարտավորությունը/ կազմում է 26.490.00 եվրո, որից հարկ՝



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

24.082.00 եվրո, տուգանք 10 տոկոս՝ 2.408.00 եվրո: Պարտավորությունն առաջացել է 05.07.2017թվականի հայտարարագրից:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, «բ» կետի՝ 17.12.2023 թվականին հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու նպատակով:

Վարչական վարույթի շրջանակներում Հայկ Մաղաքեյանը պատշաճ ծանուցվել է փոստային կապի միջոցով, ինչին ի պատասխան Հայկ Մաղաքեյանի ներկայացուցիչ Անի Հակոբյանը 01.12.2023 թվականի թիվ 979717 դիմումով հայտնել է, որ 2022 թվականի հունիսի 14-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի SCI AFINA SUCHET ընկերությունը, ի դեմս բաժնետեր-կառավարիչ Հայկ Մաղաքեյանի, վաճառել է ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Փարիզում գտնվող անշարժ գույքը, համաձայն որի վճարվել են բոլոր տեսակի հարկերը, հակառակ պարագայում, հիմք ընդունելով Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությունը նշված առուվաճառքի պայմանագիրը, չէր կարող կնքվել: Միաժամանակ ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը ֆրանսերեն լեզվով և խնդրել է հիմնավորել վճարման ենթակա գումարը՝ կից ներկայացնելով նշված փաստաթղթերի պատճենները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 06.12.2023թվականի թիվ 11/11-4/73406-2023 գրությամբ Հայկ Մաղաքեյանի վերաբերյալ փաստաթղթերը տրամադրել է ներկայացուցիչ Անի Հակոբյանին, միաժամանակ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պահանջներով՝ խնդրել է սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ քաղաքացի Հայկ Մաղաքեյանի կողմից կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվություն՝ կցելով վճարումների վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանություններով:

Նշված համաձայնագրի 27-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հայցատեր պետության իրավասու մարմնի պահանջով Հայցվող պետության իրավասու մարմինը կոնսերվացման միջոցներ է ձեռնարկում հարկի գումարի գանձման մտադրությամբ, եթե անգամ պարտքը բողոքարկվել է կամ գանձումը թույլատրող փաստաթուղթը դեռ չի կազմվել, իսկ 5-րդ կետի համաձայն՝ վարչական օգնության պահանջը ուղեկցվում է հարկային պարտքի բնույթը հաստատող հայտարարագրով, Հայցատեր պետությունում գանձումը թույլատրող փաստաթղթի պաշտոնական պատճենով, գանձման կամ պահպանման միջոցներ ձեռք առնելու համար պահանջվող ցանկացած այլ փաստաթղթով:

Ֆիզիկական անձ Հայկ Մաղաքեյանի և ներկայացուցիչ Անի Հակոբյանի կողմից, 15.12.2023 թվականի դրությամբ, վճարումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն և հիմնավորող փաստաթղթեր չեն տրամադրվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին:

Արդյունքում, ֆիզիկական անձ Հայկ Գվարդիկի Մաղաքեյանի չկատարված պարտավորությունը կազմում է 26.490.00 եվրո, որից հարկ՝ 24.082.00 եվրո, տուգանք 10 տոկոս՝ 2.408.00 եվրո: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 2023թվականի նոյեմբերի 17-ին հրապարակված տվյալների՝ 2023թվականի նոյեմբերի 17-ի դրությամբ 1 եվրոյի արժեքը կազմել է 436.75 դրամ /26.490.00 եվրո x 436.75 դրամ = 11.569.507 ՀՀ դրամ /տասնմեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ինը հազար հինգ հարյուր յոթ/հետևաբար սույն որոշմամբ գանձման ենթակա չկատարված պարտավորությունը կազմում է 11.569.507 ՀՀ դրամ:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով 1997 թվականի դեկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին» համաձայնագրի 27-րդ հոդվածով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ֆիզիկական անձ Հայկ Գվարդիկի Մաղաքեյանից գանձել 11.569.507 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

15.05.2018թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ / Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Ընդամենը /ՀՀ դրամ/	Վճարման նուղղությունը	Հաշվի համարը
1	2	7	8	9
1	Հարստության հարկ	11.569.507	Ֆրանսիայի Հանրապետության Գանձապետարանի Հատուկ Պահանջների Տնօրինություն	FR3000100639A86A000000018

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն _____

ամսաթիվ _____

Կատարող՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Մելանյա Մաթևոսյան հեռ.010-30-91-91 /91-65/



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am